

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը մասնակցել է ՀՊՏՀ ավարտական առաջին հանդիսությանը

10.07.2013



2013 թվականի հուլիսի 9-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ճանապարհում էր իր շրջանավարտներին:

Տոնական հանդիսությանը, որը մեկնարկել էր նույն օրը ժամը 11.00-ին, ներկա են եղել ՀՀ Ազգային ժողովի նախագահ, ՀՊՏՀ խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ, ՀՊՏՀ խորհրդի անդամ Արման Սահակյանը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ՀՊՏՀ խորհրդի անդամ Կարեն Ճշմարիտյանը, ՀՊՏՀ խորհրդի անդամ Բարսեղ Բեգլարյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետ, ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի նախկին դեկան Էդգար Ղազարյանը: